



**Գյումրու բնապահպանական տեղեկատվության  
հասարակական (Օրհուս) կենտրոն**

**№ Ե - 002/14**

**05-ր հունիսի 2014թ.**

**«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն Վարդան Սահակյանին  
Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգող  
Գևորգ Պետրոսյանից**

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոն Սահակյան,

հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները խնդրում եմ Գյումրու Օրհուս կենտրոնին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

**1. ՀՀ Շիրակի մարզի այն տնտեսվարող սուբյեկտների ցուցակը, որոնք 2013 թվականի և 2014թ. առաջին հինգ ամիսների ընթացքում դիմել են «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ին, ներկայացնելով նախատեսվող գործունեությունների և հայեցակարգերի վերաբերյալ նախագծեր՝ բնապահպանական փորձաքննություն իրականացնելու նպատակով (նշելով, թե ներկայումս փորձաքննական, որ փուլում են գտնվում դրանք):**

**2. ՀՀ Շիրակի մարզից բնապահպանական փորձաքննության նպատակով Ձեզ ներկայացված նախագծերից, որոնց են 2013 թվականի և 2014թ. առաջին հինգ ամիսների ընթացքում տրվել դրական եզրակացություններ, խնդրում եմ տրամադրել դրանց տրված եզրակացությունների պատճենները:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում:

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով: Կազմակերպությունը պատրաստ է տեղեկատվությունը ստանալու համար 10 էջից ավել լինելու դեպքում տեղեկության պատճենահանման յուրաքանչյուր էջի համար վճարել 10 դրամ (նախապես գումարը փոխանցելով Ձեր կողմից նշված բանկային հաշվին) կամ տրամադրել որևէ կրիչ՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկության ստացման համար:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգող

Գ. Պետրոսյան